

† յամն 1773:», ո՞վ է այս Պրուսայի Եպիսկոպոսն Սամուէլ, զոր Վանքեան Եպ. չի յիշեր իւր Պրուսայի առաջնորդաց գաւազանագրքին մէջ (« Բիւզանդիոն », անդ). ինչ էր մեր Սամուէլ Եպ. Երզնկացւոյ մականունը. արդեօք Լաճեան Եպ.ի մահուան թուականի « 1773 » ընթերցումը կամ տպագրութիւնը սխալ չէ՞, քանի որ մեր Սամուէլն 1775ին դեռ ողջ էր ստուգապէս: Հարցումներ, որոնց չեմ կարող պատասխանել:

Միմիակ ակնարկութիւն մը գտայ ըստ լատ. 6 Հոկտ. 1778ին Կ. Պոլսէն գրուած նամակի մը մէջ (Գիւ. Անտ), որմէ կ'իմացուի, թէ Սամուէլ այս միջոցին Պոլիս դարձած էր արդէն: Նամակագիրը կ'ըսէ. « . . . Գրդեալ եւ յորդորեալ ի յետս դարձմանէ Սամուէլի, ի վրէժ չուամն գ. Կրիգոր Պատրիարքի, ի վրէժ համարձակութեան ձերում ընդդէմ դէսսգորոսական վարդապետութեան որ ի պօլիս . . . զազարիա պատրիարգ ձեռն արկանէ ի հալածել զեկեղեցին հանդերձ իւրովք գործակցօք . . . »:

Ունինք ուրիշ կողմանէ վկայութիւն մ'ալ 1780ին Կ. Պոլիս գտնուելուն. վասն զի Բարբէն Վ. կը գրէ թէ Պալաթու Ս. Հրեշտակապետ Եիեղեցւոյ մէջ կը պահուի Սամուէլ Եպ.ի 1780ին գրած հետեւեալ աշխատասիրութիւնը. « Կըլն-ի-ն Դոստիան, եւ ջէր-Բոսնի-Բեան ողբէց Կեդր, ժողովեալ եւ յարմարեալ ի Սամուէլ չնչին անիմաստ Արեղայէ եւ վերատեսուէէ Պրուսայու » (« Լոյս » 1905, էջ 967,